Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պարզաբանումն ԱՄՆ-ում «Առաջին ալիք»-ի վերահեռարձակման վերաբերյալ

Պատասխանելով Լոս Անջելեսում գործող ARTN հեռուստաընկերության նախագահ և սեփականատեր Ռոբերտ Օղլաղչյանի կողմից Հանրային հեռուստաընկերությանը ներկայացված մեղադրանքներին՝ հայտնում ենք հետևյալը.

Հանրային հեռուստաընկերության «Առաջին ալիք»-ը Ամերիկայի Միացյալ Նահանգների տարածքում վերահեռարձակվում է «ՊանԱրմ ինք» ընկերության միջոցով: Վերահեռարձակման իրավունքի տրամադրումը ոլորտը կարգավորող իրավական ակտերով մրցույթ անցկացնելու պահանջ չի նախատեսում, հետևաբար Հանրային հեռուստաընկերությունն ունի իր հայեցողությամբ վերահեռարձակող ընտրելու իրավունք:

Այդուհանդերձ, 2019 թ.հունիսին Խորհրդի նախագահը մամուլում բազմիցս հայտնել է ԱՄՆ-ում Առաջին ալիքի վերահեռարձակման նոր պայմանագիր կնքելու ցանկության մասին: Դրանից հետո երեք ամիսների ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը չի ստացել ոչ մի առաջարկ ARTN կամ որևէ այլ ընկերությունից: Խորհուրդը զուգահեռաբար անցկացրել է մասնավոր հարցումներ և հեռակա ուսումնասիրություն Լոս Անջելեսում հնարավոր գործընկեր գտնելու նպատակով, բայց համոզվել է, որ տեղի հայկական հեռուստաշուկայում տիրող անառողջ մրցակցությունը լայն ընտրության հնարավորություն չի տալիս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՊանԱրմ ինք» ընկերությունը.

- 2014-2019 թթ.կատարել է Վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագրով ստանձնած պարտավորությունները,

- ամերիկյան Spectrum ընկերության հետ համագործակցության արդյունքում մեծացրել է հեռարձակման գոտին՝ Առաջին ալիքն ավելի հասանելի դարձնելով ԱՄՆ հայ հեռուստադիտողին,

- 2014 թվականից Հարավային Կալիֆորնիայի հայ հեռուստադիտողների համար Առաջին ալիքը հասանելի է դարձրել անվճար հիմունքներով,

- Հանրային հեռուստաընկերության պահանջով ընդունել է գովազդի տևողության սահմանափակումները, վերահեռարձակման տեխնիկական նոր պահանջները և պայմանները,

- բարձրացրել է Վերահեռարձակման իրավունքի տրամադրման դիմաց վճարվող գինը տարեկան 30.000 ԱՄՆ դոլարից մինչև 48.000 դոլար՝

Հանրային հեռուստառադիոընկերության Խորհուրդը համաձայնություն է տվել հեռուստաընկերության Գործադիր տնօրենին «ՊանԱրմ ինք» ընկերության հետ ևս 5 տարի ժամկետով վերակնքելու Վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիրը:

Հարկ է նշել նաև, որ վերահեռարձակման իրավունք ստացած ընկերությունը, բացի տարեկան 48.000 դոլար վճարից, հոգում է Պայմանագրից բխող ծառայության մատուցման բոլոր ծախսերը, այն է՝ ամերիկյան կաբելային ընկերությունների և վերգետնյա հեռարձակողների միջոցով «Առաջին ալիք»-ի հաղորդումների տարածումը, իր աշխատողների վարձատրությունը և այլն: Այդ ծախսերը, որոնք մի քանի անգամ գերազանցում են վերահեռարձակման իրավունքի (լիցենզիայի) համար վճարվող գումարը, «Պան Արմ ինք» ընկերությունը փոխհատուցում է «Առաջին ալիք»-ի ծրագրում գովազդ տեղադրելով և կրում է բոլոր ռիսկերը դրանք չփոխհատուցելու պարագայում, ինչը աշխարհում ընդունված պրակտիկա է:

Եւ չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ հաշվի առնելով հայ հանրության արդեն բորբոքված սպասելիքները՝ Հանրային հեռուստառադիոընկերության Խորհուրդը ընդունում է պարոն Օղլաղչյանի ժամկետանց առաջարկը և պատրաստ է կնքել վերահեռարձակման պայմանագիրը ARTN հեռուստաընկերության հետ 2019 թ. նոյեմբերի 1-ից՝ նույն պայմաններով, ինչ «ՊանԱրմ ինք» ընկերության հետ՝ փոփոխելով միայն լիցենզիայի համար նախատեսված վճարի չափը՝ բարձրացնելով այն տարեկան 48.000-ից մինչև 1 մլն դոլար, ինչը 5 տարվա համար կազմում է 5 մլն դոլար, ինչպես և խոստացել է պարոն Օղլաղչյանը:

Հասկանալով առաջարկի բիզնես ռիսկերը՝ Հանրային հեռուստաընկերությունը բանակցելու է «ՊանԱրմ ինք» ընկերության հետ պայմանագրի հնարավոր չեղարկման հետևանքների շուրջ: Ուստիև սպասում ենք Ռոբերտ Օղլաղչյանի գրավոր արձագանքին:

Պարոն Օղլաղչյանը ասուլիսում նշում էր նաև «Գլոբքաստ» ընկերության անունը, որն իբրև թե 2013 թվականից փակվել է և այլևս գոյություն չունի, բայց որի հետ կնքված պայմանագրով Հանրայինն իրականացնում է իր արբանյակային հեռարձակումը: Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը: Գլոբքաստ Ֆրանս ընկերությունը շարունակում է գործել և այսօր էլ ապահովում է Հանրայինի արբանյակային սփռումը: 2015 թվականին տեխնիկական որակի բարելավման և ֆինանսական տնտեսման նպատակով Հանրայինը փոփոխել է իր արբանյակային հեռարձակման սխեման և Գլոբքաստ ընկերության հետ կնքված պայմանագրում

կատարվել է փոփոխություն. վերջինս «Առաջին ալիք»-ի հաղորդումները Հյուսիսային Ամերիկայում սկսել է հեռարձակել Galaxy 19 արբանյակով:

Անհրաժեշտության դեպքում, որպես «կոռուպցիոն բացահայտման» հերքում, կարող ենք ներկայացնել «Գլոբքաստ Ֆրանս» ընկերության հետ Հանրայինի համագործակցությունը հավաստող նամակը ֆրանսիական ընկերությունից՝ ստորագրված 2019 թ.փետրվարին:

Հանրային հեռուստաընկերության շուրջ հասարակական հետաքրքրությունը և թափանցիկության պահանջները հասկանալի են և ողջունելի: Սակայն այդ պահանջները պետք է հիմնված լինեն առողջ փաստարկների, այլ ոչ թե մանիպուլյատիվ հայտարարությունների վրա:

20 սեպտեմբեր, 2019թ.

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ